ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱԿ ՊԸԾՁԲ 16/04» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐՁԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

/կազմվում է համաձայն «Գնումների մասին» օրենքի 8-րդ հոդվածի/

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը և ապրանքի համառոտ նկարագիրը

Հայաստանի զգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ի կարիքների համար մուլտֆիլմի ձայնագրման ծառայություններ ձեռքբերելու նպատակով Կինոկենտրոնի տնօրենի 04.04.16թ. թիվ 07-Ա հրամանի համաձայն ստեղծվել է պատասխանատու ստորաբաժանում, որը 04.04.16թ-ին պատրաստել է գնման հայտ և 05.04.16թ-ի զեկուցագրով առաջարկել գնահատող հանձնաժողովի կազմը: Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենի 05.04.16 թ.-ի թիվ 08-Ա հրամանով սահմանվել է գնահատող հանձնաժողովի կազմը:

Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ (ք. Երևան, Պուշկին 38/2) գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. ապրիլի 7-ին հաստատվել է «ՀԱԿՊԸԾՁԲ 16/4» ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտարարության տեքստը, որն էլ նույն օրը ուղարկվել է gnumner@mincult.am կայքին:

Մրցութային գործընթացը կազմակերպվել է թղթային եղանակով:

2. Գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրությունը

Ծառայության ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի ազգային կինոկենտրոնի «Անբան Հուրին» մուլտֆիլմի արտադրական կարիքների համար ձայնագրման ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտությամբ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ ենթակետի գնման ձև է ընտրվել պարզեցված ընթացակարգը:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները

Հրավեր է հանդիսանում «ՀԱԿՊԸԾՁԲ16/04» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված ընթացակարգի հրավերը:

Հրավերում կատարվել են փոփոխություններ՝ շտկվել են որոշ անհամապատասխանություններ:

13 ապրիլի 2016թ պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ տեղադրվել է հայտարարություն և փոփոխված հրավեր «ՀԱԿՊԸԾՁԲ16/04/1 » ծածկագրով:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները

Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, հասցեները և կապի միջոցները

«ՀԱԿՊԸԾՁԲ16/04/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտեր ոչ մի մասնակից չի ներկայացրել

12. Այլ անհրաժեշտ տեղեկություններ

Հաշվի առնելով ժամանակի սղությունը և գնման անհետաձգելի պահանջը՝ «Անբան Հուրին» մուլտֆիլմի արտադրությունը ժամանակին ավարտելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովը որոշում ընդունեց ձայնագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կիրառել բանակցային ընթացակարգ/Գնումների մասին օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով/:

Պատվիրատուի ղեկավար՝ Գ. Գևորգյան

Գնման ընթացակարգի քարտուղար

Կ.Տ

<< 26 >> << 04 >>.2016թ.